

ԲԺ. ԳՅԱՆՁՈՒՆՑԱՆ
Ճր. ԳՅԱՆՁՈՒՆՑԱՆ

ՑՈՒՑԱԿՆԵՐԵՐ ՅԵՎ ՀԱԿԱՑՈՒՑՈՒՆԵՐԵՐ
ՀԻՎԱՆԴԱԿՆԵՐԻՆ
ՍԱՆԱՏՈՐԻԱ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ


ПОКАЗАНИЯ И ПРОТИВОПОКАЗАНИЯ
ДЛЯ ОТРАВКИ БОЛЬНЫХ В САНАТОРИЙ

ՀՐԱՄԱՎՈՐՎՈՒՅ ՀԱՐՄԱՆ
ՎԵՐԿԱՆ 1935

18 DEC 2017

ԲԺ. ԳՅԱԶՈՒՑՅԱՆ
Ճր. ԳՅԱՋՈՒՆՅԱՆ

ՅՈՒՂԱՄՈՒՆՔՆԵՐ ՅԵՎ ՀԱՇԱՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ
ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ
ՍԱՆԱՏՈՐԻԱ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1936

ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՌԻԴԵԳՐԵՐԸ ՌԱՅԻՈՆԱԼ ԿԵՐՊՈՎ
ՌԴՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առողջապահության ցանցի խոշոր ողակ-ներից մեկը հանդիսանում է մեր բալնեոլո-գիական կուրորտաներն ու կլիմայական կայանները:

Կուրորտային բուժումը համարելով աշ-խատավորների առողջացման և նրանց աշխա-տունակության վերականգնման հզորագույն միջոցներից մեկը, մենք հենց դրանով են դունում ենք, վոր կուրորտաներն աշխատանքի արտադրողականության բարձրացման հակա-յական գործոն են հանդիսանում:

Այսպիսով, կուրորտային շինարարության պլանը պետք է բղիքի ընդհանուր քաղա-քա-տնտեսական խնդիրներից:

Հաշվի առնելով քաղաքի և գյուղի աշ-խատավոր բնակչության կուրորտային ողնու-թյան կարիքը և կուրորտային բուժման ար-դյունքները գիտական տեսակետից, մենք կապահովենք կուրորտային գործի զարգա-ցումն ընդհանրապես: Պետք է ավելացնել, վոր կուրորտային պայմաններում ամենից ավելի հաջող կարող ե կիրառվել մի շարք հիվան-



1-32749ր

Տեխ. ձեվակ. յեկ պրազք. Ա. Հայովերդյան

Գլավլիս 549.

Պատվեր 1520.

Տիրաժ 3000

Գևահրատի տպարան - Յերևան

գությունների բուժումը պլոֆալաթոլոդիալէ գծով: Մի շաբաք կուրորտա-բալնեոլոգիական կետերից պետք է առանձին ուշադրության արժանացնել այն վայրերը, վորոնք արդյունաբերության շահերի տեսակետից ամենից ավելի արժեքավոր են հանդիսանում: Սակայն այդ հանգամանքը չպետք է բացասարար անդրադառնա ընդհանուր կուրորտային շինարարության վրա:

Յելակետ ունենալով այն սկզբունքը, վոր «Հիվանդին ամենակարճ ժամանակամիջոցում պետք է տալ աշխատունակության առավելագույն կայուն վերականգնում և այդ պետք է անել նվազագույն ծախքերի գնով՝ համեմատած տեղական պայմաններում կիրառվող բուժման մեթոդների հետ», մյուս կողմից նկատի առնելով կուրորտային բուժման թանգությունը, անհրաժեշտ է ճշությամբ հայտնաբերել բոլոր ցուցմունքներն ու հակացուցմունքներն այսինքն՝ վորոշել այս կամ այն բուժավայրն ուղարկելու նպատակահարմաքությունը: Հիվանդներին ընտրելիս պետք է մերժել վոչ միայն «հակացուցանշական» (противопоказательные) դեպքերը, այլև «ստկավ ցուցանշկան՝ դեսկրերը: Մյուս պրոֆիլակտիկ հիմնարկները պետք են ողնության դան և իրենց վրա վերցնեն «սակավ ցուցանշական» և «վոչ ցուցանշկան» հիվանդների (мало показанные и непоказанные болезни (բուժման դրդը:

Պ.յդականի հաստատություններ են՝ հանդստյան տները, կլիմայական կայանները, պրոֆիլակտորիաները և այլն:

Ամենից առաջ յուրաքանչյուր կուրորտ պետք է ճշությամբ բնույթագրվի՝ ցուցմունքներն ու հակացուցմունքները վորոշելու տեսակետից: Պետք է հայտնաբերվեն յուրաքանչյուր կուրորտի առանձնահատկությունները, պետք է պարզորոշ գծվի յուրաքանչյուր կուրորտի կերպարանքը և պետք է բացարկվեն այն բոլոր ցուցմունքները, վորոնք հատուկ չեն տվյալ կուրորտին:

Միաժամանակ անհրաժեշտ է խմբավորել կուրորտային ցուցմունքներն ըստ սեզոնների: Պետք է ոգտագործել այն ամիսները, վորոնք եֆեկտի տեսակետից առավելագույն արդյունք չեն տալիս:

Այնուհետև անհրաժեշտ է նաև շրջանացման յենթարկել կուրորտային բուժումը: Կարեռ խնդիր են և այն, վոր բանվորի կուրորտային բուժումը մոտեցվի նրա բնակավայրին:

Վերջապես, բոլոր հնարավորություններն ոգտագործելու տեսակետից անհրաժեշտ է կուրորտաներում համակցված (комбинированый) բուժում կիրառել, միացնելով կուրորտային հնարավորությունները բուժման այլ մեթոդների հետ՝ ֆիզիոտերապետիկ, դեղորայքային և այլն:

Անհրաժեշտ ե ուշադրության առնել և
մեկ հանգամանք. այդ այն ե, վոր պետք ե
զարկ տալ տեղական նշանակություն ունեցող
կուրոբաններին: Մյուս կողմից, անհրաժեշտ ե
կանոնավոր հիմքերի վրա դնել հիվանդների
ընտրության գործը, ինչպես նաև կանոնավոր
ուղեգրերի բաշխումն ըստ արտադրու-
թյան:

Եկնելով այն սկզբունքից, վոր «Հիվան-
դին ամենակարճ ժամանակամիջոցում պետք ե
տալ մաքսիմալ ու կայուն աշխատունակու-
թյան վերականգնում և այդ անել նվազագույն
ծախքերի գնով՝ համեմատած տեղերում կի-
րառվող բուժման մեթոդների հետ», բնակա-
ռաբար, հիվանդների ընտրությունը պետք ե
կատարվի ամենայն խստությամբ և այն հաշ-
կով, վոր կուրոբան ուղարկվեն հենց այն
վով, վոր կուրոբան ուղարկվեն հիվանդները, վորոնց կուրոբային բուժումը
կարող ե առավելագույն արդյունքներ տալ
«ամենակարճ ժամանակամիջոցում»:

Դրա համար անհրաժեշտ ե, մի կողմից,
վոր բոլոր կուրոբանների համար ճիշտ ցուց-
վոր բոլոր կուրոբանների համար ճիշտ ցուց-
վոր բոլոր կուրոբանների մշակվեն և
մունքներն ու հակացուցմունքներ մշակվեն և
մյուս կողմից՝ հիվանդների ընտրության մեջ
մասնակցեն մասնադես բժիշկները:

Մյուս խոչը խնդիրը կայանում ե նրա-
նում, վոր պետք ե հայտնաբերել յուրաքան-
չյուր արտադրության պրոֆիլը՝ այս կամ այն
հիվանդության տարածման ու պրոֆիլակտիկ

ձեռնարկումների իմաստով: Արտադրության
բնութագրումը հենց կարող ե ասել, թե ինչ-
պիսի կուրոբաններ կարող են առավելագույն
չափով ոգտագործվել տվյալ արտադրության
բանվորների կողմից: Պարզ ե, վոր կաշվե-
գործարանը ավելի շատ ուղեգրեր կ' պահանջի
բեկմատիկ հիվանդությունների կուրոբաննե-
րի համար, ուղեգրերը՝ թոքային և այլն:

Վերոհիշյալից կարելի յե կայացնել հե-
տեվյալ յեզրակացությունները՝

1. Անհրաժեշտ ե ոգտագործել մեր կուրոբ
տային հնարակությունների—ուղեգրերը
ուսցիոնալ կերպով:

2. Մեր բուժ հիմնարկների տրամադրու-
թյան տակ պետք ե ճիշտ տվյալներ լինեն բո-
լոր կուրոբանների ցուցմունքների ու հակացուց
մունքների մասին:

3. Պետք ե հիվանդների խիստ ընտրու-
թյուն կատարվի մասնագետ բժիշկների գլո-
խավորությամբ:

4. Պետք ե բոլոր կուրոբանների ճիշտ սպե-
ցիֆիկացիա կիրառվի, ինչպես նաև խմբավո-
րում՝ ըստ սեղոնների:

5. Անհրաժեշտ ե ունենալ յուրաքանչյուր
արտադրության բնութագիրն այն իմաստով,
վոր հայտնաբերվեն արտադրության մեջ տե-

զի ունեցող պրոֆապաթոլոգիական տեղաշարժերը, ինչպես նայել այն հիվանդությունները, վորոնք մասսայական բնույթ են կրում տվյալ արտադրության մեջ:

6. Հիմնվելով վերոհիշյալի վրա, անհրաժեշտ ե ուղեգրերը բաշխել ըստ արտադրության տվյալ ցուցանիշների:

ԲԺ. ԳՅԱՆՉՈՒՅՑՅԱՆ

16/5—34 թ.

ՅԵՐԵՎԱՆ.

ՅՈՒՅՏՈՒՆՔՆԵՐ ՅԵՎ ՀԱԿԱՑՈՒՅՏՈՒՆՔՆԵՐ

ՀԻՎԱՆԴԻՆԵՐԻՆ ՍԱՆԱՏՈՐԻԱ. ՈՒՂԱՐԿԵԼՈՒ
ՀԱՄԱՐ

Սանատորիական բուժման պետք ե ուղարկվեն այն հիվանդները, վորոնք չեն կարող բուժվել տեղական բուժական հիմնարկների միջոցներով և իրենց մշտական բնակավայրի պայմաններում, և այն ել միայն այնպիսի հիվանդներ, վորոնց բժշկումը կուրորտում (բուժավայր) կարճ ժամանակամիջոցում կարող ե դրական արդյունքներ տալ: Մանր հիվանդները, մանավանդ պառկածները, բարձր ջերմաստիճանով, վոչ մի դեպքում կուրորտ չպետք ե ուղարկվեն:

Նմանապես կուրորտ չպետք ե ուղարկվեն այն անձինք, վորոնք հիվանդ չեն, այլ միայն հոգնած: Հոգնածներն ուղարկվում են միայն հանդստյան տները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱԿԱՑՈՒՅՏՈՒՆՔՆԵՐ ԲՈԼՈՐ
ԿՈՒՐՈՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կուրորտային բուժման յենթակա չեն հիվանդների հետեւյալ խմբերը՝.

1. Անբուժելի հիվանդները, համանդամ-
ները, իրենց աշխատունակությունը մեծ չա-
փով կրցցրած անձինք:

2. Այս հիվանդները, վորոնք տառապուա
են սննդառության խիստ արտահայտված ան-
կումով։

3. Այս հիվանդները, վորոնք ունեն սերբութործարանների (սիրտ, յերիկամներ) կոմպենսացիայի խանդարում:

4. Այն հիվանդները, վորոնք տառապում
են, angina pectoris-ով (կրծքի հեղձուկ
—грудная жаба), և իստ արտահայտված ար-
տերիոսկլերոզով, առօտայի և պերիֆերիկ
անթների անելլրիզմով:

5. Այս հիվանդները, վորոնք միաժամանակ տառապում են մի քանի ծանր հիվանդություններով, վորոնք ավելի յեն ծանրացնում հիմնական հիվանդությունը, որինակ՝ մի-գած յուրություն թոքային տուբերկուլյոզի հետ միասին, սրտի ախտահարություն՝ յերիկամ-ների ֆունկցիայի խանդարման հետ միաժամանակ ե այն:

6. Բոլոր սուր և վարակիչ հիմնդություններով տառապողները:

7. Արյունահոսության կայուն հակոռա
ունեցող հիմանդրները:

8. Եպիլեպսիայով (ընկնավորություն), հոգեկան հիվանդություններով, ծանր նեվրոզով տառապող հիվանդները:

9. ՊԵՐՆԻՇԽՈՂ (ՀԱՐՈՂԱԿ) անհմիայով և
լեյկեմիայով տառապող հիվանդները:

10. Զարորակ նորագոյացություններ ունեցող հիվանդները:

11. Խըսնիկ համաձարակային ենցիֆալի-
տով տառապող հիվանդներ:

12. 7 ամսից ավելի Հղիները:

ԽՈՐՀԻԿԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՐՈՐՏՆԵՐԸ

1. ԳԻԼԻԶԱՆ

ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՅԵՎ ՀԱԿԱՑՈՒՑՄՈՒՆՔ-
ՆԵՐ «ԴԻԼԻԶԱՆ» ԿՈՒՐՈՐՏՈՒՄ ԲԺՇԿՎԵԼՈՒ
ՀԱՄԱՐ

8n1gufn1Gf6kp

1. Թողքերի պլատընսկիվ տուբերկուլյոզ,
ստացիոնար և հանդարտվող մեկ կամ յերկկող-
մանի ախտահարությամբ, չափավոր տարած-
վածությամբ, աննշան հաջողությամբ կամ
առանց հաջողության տեղում բժշկած, առանց
խիստ գեստրուկտիվ (քայլքայիչ) յերեւութ-
ների և ինտոկսիկացիայի (թունավորում):

2. Վաղաժամ ինֆիլտրատ:

3. Պնեմվառութաքս և վոչ թարբախային
բնույթի պնեմվառլեկը իտ ունեցող հիվանդնե-
րութեա:

4. Այսոնիկ պլեվրիտ՝ չվարուովու քիրավի
(Աբրթորանք — ВЫПОТ) մնացողդներով,

առանց խիստ հյուծման և աչքի ընկնող յերեսութների՝ թոքերում:

5. Պերիփերիկ և ներքին գեղձերի տուրերկույզային ախտահարություն առանց ընդարձակ թարախակալումների, առանց բարձր ջերմաստիճանի և առանց խիստ հյուծմածության:

6. Տուրերկուլյոզային պերիտոնիտ առանց աղիքների կլինիկորեն ախտահայտված ախտահարության:

7. Մաշկի տուրերկուլյոզ:

8. Մաշկի սկավող տուրերկուլյոզ առանց խոցոտման յերեսութների:

9. Վոսկորների և հողերի տուրերկուլյոզ.

ա) տուրերկուլյոզային սպոնդիլիտի սկզբնական ձևեր առանց քայքայիչ վոսկրային վիովիխությունների կամ՝ նախնական վոսկրային դեստրուկցիաներով (քայքայում):

բ) մեծ հողերի յենթասուր և խրոնիկ խառն ու փակ ախտահարություն (կոնքազդրային, ծնկային և ուսային հողերի):

գ) մեծ հողերի յենթասուր և խրոնիկ խառն ախտահարություն, բաց ձևի, առանց սննդի անկման:

դ) վոսկրահողային տուրերկուլյոզի սկզբնական ձևեր, սինովիալ, խառն սահմանափակ պրոցեսով.

ե) միջին հողերի (վոչ ավելի յերկութից) ախտահարություն, բաց և փակ ձևերի, առանց

յին, արմենկային):

սննդի անկման (սրունքուլնային, ճաճանչաղ) փոքր հողերի տարածված ախտահարություն, բաց և փակ տեսակի.

ը) պոլիսերողիտ և պոլիարտրոդ: Պոնսեյի տիպի պոլիարտրիտ:

Հակացուցմունիքներ

1. Սպեցիֆիկ բնույթի խոցավոր (ուլցերոզ) լարինդիտ: Թոքային պրոցեսներ, վորոնք կապված են սրտի թուլության հետ: Թարմ պլեվրիտ և կրկնվող պլեվրիտ (արեթիտիո), թոքերի տուրերկուլյոզային բնույթի ընդարձակ ախտահարություն՝ խիստ նիշարումով, տախիկարդիայով, հեկտիկ ջերմաստիճանով:

2. Խիստ արտահայտված արտերիոսկլերոզ, միաստենիտ, միոկարդիտ և սրտի նեվրոզ: Ենդոկարդի ախտահարումն դեկոմպենսացիայի հակումով:

3. Նեֆրոզ, նեֆրոզանեֆրիտ, յերիկամսերի տուրերկուլյոզ և ամիլոփիդ:

4. Խիստ արտահայտված նեվրաստենիտ, պսիխոստենիտ, հիստերիտ, եպիլեպսիտ, վորոշակի հայտնաբերված բազեգովյան հիվանդություն:

5. Յերկարատև կոլիտ, ենտերոկոլիտ և աղիքների տուրերկուլյոզ:

6. Պոդաղրա, դիարետ, ճարապակալում և ռեմատիկ հիվանդություններ:

7. Վոսկրա-հոդային տուբերկուլյոզ
բարձր ջերմաստիջանով և թարմ ակտիվ ախ-
տահարությամբ։ Վոսկորների տուբերկուլյոզ,
վորին ընթացակցում են այլ գործարանների
հիվանդնություններ, վորոնք հակացուցմունք
են ծառայում վոսկրային պրոցեսսը բուժելու
համար։ Վոսկրա-հոդային տուբերկուլյոզի
վերջնական ձևեր։

2. ԱՐ ԶՆԻ

ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՅԵՎ ՀԱԿԱՑՈՒՑՄՈՒՆՔ-
ՆԵՐ «ԱՐՁՆԻ» ԿՈՒՐՈՐՏՈՒՄ ԲԺՇԿՎԵԼՈՒ
ՀԱՄԱՐ

ՑՈՒցՄՈՒՆՔՆԵՐ

1. Սրտա-անոթային սիստեմի հիվանդու-
թյուններ։

ա) Սրտի մկանի, կափույրային ապարա-
տի որդանական և ֆունկցիոնալ ախտահարու-
թյուն՝ սրտային մկանի թուլացման հետ
միասին, վորը թե առաջնորեն է յերեան յե-
կել (ենդոկարդիտիկ բնույթի), և թե առա-
ջացել է նյութերի փոխանակության ու ներ-
քին սեկրեցիայի հիվանդությունների հե-
տեւանքով (ենդոկրինոլոգիական), առանց կոմ-
պենսացիայի խիստ խանգարումների։

բ) կենտրոնական և պերիֆերիկ անոթ-
ների սկլերոզի սկզբնական ձևեր։

2. Ստամոքսի և աղիքների հիվանդու-
թյուններ։

ա) ստամոքսի կատառ նվազ թթվու-
թյամբ, ֆունկցիոնալ տեսակետից նվազած
թթվություն և աղաթթվի բացակայություն։

բ) աղիքների խրոնիկ կատառ և ատոնիա։

Ստորև հիշված հիվանդությունները,
միայն հիմնական ցուցանիշների զուգակցու-
թյամբ (մաս 1 և 2)։

3. Ներվային համակարգության հիվան-
դություններ։

ա) նեվրոզ և անդրոնեվրոզ.

բ) սեռական նեվրաստենիա.

գ) նեվրալգիա և նեվրիտ։

4. Շարժման գործարանների հիվանդու-
թյուններ. վոսկորների, հողերի և մկանների
խրոնիկ հիվանդություններ՝ բեկմատիկ, վա-
րակիչ և ինտոկսիկացիոն բնույթի։

Հակացուցմունքներ

1. Սրտա-անոթային սիստեմի հիվանդու-
թյուններ։

ա) չվերջացած սուր բորբոքումներ սըր-
տի և անօթների կողմից.

բ) գեկոմպենսացիայի խիստ արտահայտ-
ված յերեսույթներ (վորպիսին են՝ կայուն
կամ տարածված այտուց, լյարդի կանգային
ցիրրոզ և այլն)։

գ) անեվրիզմ։

դ) կրծքի հեղձուկ (грудная жаба).

ե) յերիկամային ծաղում ունեցող հիպեր-
տոնիա։

զ) բարձր ներվային գրգռականությամբ
տառապող անձանց սրտի և անոթների հիվան-
դություններ, թե առանձին և թե այլ հիվան-
դությունների զուգակցությամբ:

2. Ստամոքսի և աղիքների հիվանդու-
թյուններ.

ա) ստամոքսի և 12-մատնյա աղիքի խո-
շեր.

բ) ստամոքսի կատառ՝ ինիստ բարձր
թթվությամբ.

գ) խոցային ենտերոկոլիտ.

3. Ներվային համակարգության հիվան-
դություններ.

ա) որգանական ներվային հիվանդու-
թյուններ՝ հիպերիխնեղային և ստնդանքային
(սպաստիկ) արտահայտություններով.

բ) նեվրոզ և պսիխոնեվրոզ՝ գրգռման
ինիստ արտահայտված յերեռոյթներով (նեվ-
րոզի երետիկ ձևեր).

գ) ենդոկրինային գեղձերի նեվրոզներ՝
հիպերսեկրեցիայի յերեռոյթներով:

Այսպիսով Արզնին հանդիսանում է սրտա-
անոթային հիվանդությունների կուրորտ:

Յ. Ա Խ Թ Ա Լ Ա

Կիսասանատորիական տիպի հանգստյան
տուն՝ թոքային հիվանդությունների թեքու-
մով բժշկվելու ժամանակամիջոցը 1 սմիս)

Ցուցմունիքներ

1. Սակավարյունություն, սննդի անկում՝
մանավանդ վարակիչ հիվանդություններից
հետո:

2. Գերհողնածություն մտավոր կամ ֆի-
զիկական աշխատանքից:

3. Նեվրաստենիա և նեվրոզ վոչ սուր ձևի.

4. Բրոնխիտ՝ խրոնիկ ընթացքով, չոր
պլեվրիտ և բրոնխիալ աստմա:

5. Բրոնխոադենիտ և պերիֆերիկ գեղ-
ձերի ախտահարում առանց խոցոտման, ա-
ռանց խլվակների (СВИЩ) ու տաքության:
6. Կոմպենսացիայի յենթարկված (ком-
пенсированный) թոքերի տուրերկուլյող 1-ին
շրջանի (Բ₁).

7. Պնեյմոկոնիտոզ ունեցող հիվանդներ,
առանց հյուծման սուր յերեռոյթների:

8. (Ադդեզիվ) չոր պլեվրիտ ունեցող հի-
վանդներն, առանց թոքերի ախտահարության:

Հակացուցմունիքներ

1. Թոքերի տուրերկուլյոզի բոլոր մնա-
ցած ձևերը:

2. Քիրտային (выпотные) և կրկնվող
պլեվրիտ՝ թոքերի ախտահարության հետ մի-
ասին:

3. Թոքերի այլ հիվանդություններ, վո-
րոնք հատուկ բժշկական հսկողություն ու
բուժում են պահանջում:



4. Վարակիչ և մաշկային հիվանդություններով տառապող անձինք:

5. Անկողնային խնամք պահանջող հիվանդներ:

6. Հատուկ բուժում պահանջող հիվանդություններ:

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՅԵՎ ԱԲԽԱԶԻԱՅԻ ՈՒ ԱԶՄՐՄՏԱՆԻ ԱՎԾՈՆՈՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՈՐՏՆԵՐԸ

1. ԲՈՐԺՈՄ

Ցուցմունիքներ

1. Ստամբուլ-աղիքային հիվանդություններ:

1) Ստամբուլի և 12-մատոնյա աղիքի խոցեր (վոչ սուր ձեփի):

2) Ստամբուլի խրոնիկ թթվային կատառ.

3) Աղիքների խրոնիկ կատառ, բարձային կոլիտ և ենտերո-կոլիտ (բացառությամբ ամբողջայինի և խոցայինի):

2. Լյարդի և լեղուղու հիվանդություններ.

1) Լեղապարկի և լեղուղու խրոնիկ կատառ, լեղաքարային հիվանդություն, կանգային լյարդ՝ աղե-ստամբուլային տրակտի (ուղի) խրոնիկ հիվանդությունների հետեւանքով:

3. Ցերիկամների և միզատար (մօչեա-

ՅՈՃՅՊԵՅԻ) գործարանների հիվանդություններ.

1) Ցերիկամային սկահակի, միզածորանի և միզապարկի խրոնիկ բորբոքային հիվանդություններ՝ մեզի թթվային ռեակցիայի առկայությամբ:

2) Թթվային դիատեզներ՝ ուրատուրիա և ոքսալուրիա (յերիկամային քարեր):

3) Միջին և թեթև տեսակի նեֆրոզ և նեֆրիտ (ամառվա սեղոնին):

4. Նյութերի փոխանակության հիվանդություններ:

1) Ճարպակալում, սիրտագրա, թեթև և միջին տեսակի դիարետ (չաքարամիզություն):

5. Սրտա-անոթային սիստեմի հիվանդություններ:

1) Սրտի որդանական հիվանդություններ՝ կըմպենսացիայի և յենթակոմպենսացիայի վեճակում:

2) Սրտի միաստենիա.

3) Թույլ և միջին աստիճանի արտերիոսկերոզ:

4) Զարիավոր և եսսենցիալ հիպերտոնիա.

5) Սրտի նեվրոզ.

6. Շնչական ուղիների հիվանդություններ.

1) Վերին չնչառական ուղիների հիվանդություններ՝ վոչ տուրերկուլյոզային բնույթի:

2) Թողերի եմֆիզեմայի և բըռնխիալ աստմայի թեթև և միջին տեսակները:

7. Ենդոկրին հիվանդություններ.

1) Բազեղովյան հիվանդություն, վոչծանր տեսակի:

8. Ներվային համակարգության (սիստեմ) հիվանդություններ:

1) Ներվային համակարգության ֆունկցիոնալ հիվանդություններ.

ա) Նեվրաստենիա՝ առավելապես նեվրատենիկ ռեակցիայի ձևով.

բ) պրոֆեսիոնալ ներվային հիվանդություններ.

9. Գինեկոլոգիական հիվանդություններ.

1) Արգանդի, հավելվածների, կոնքային խորշաթաղանթի (կլետчатկա) խրոնիկ բորբոքումներ, անոմալիաներ, ձվարանների դիսնական ստենոզ՝ շարժողական ֆունկցիա-

Հակացուցմունքներ

1) Ստամոքսարերանի (привратник) որդանական ստենոզ՝ շարժողական ֆունկցիայի խանգարման հետ միասին.

2) Աղեստամոքսային ուղու չարորակ ուղղուցքներ:

3) Որդանական ստամոքսային աքիլիուս (ախլիայ):

4) Խոցային և ամյուսային ենտերո-կոլիտներ:

5) Նեֆտոպո-նեֆրիտ (ծանր տեսակի):

6) Թոռֆաստուրիա.

7) Դիարետի ծանր դեպքեր:

8) Սրտի որդանական հիվանդություններ՝ գեկոմպենսացիայի զուգակցությամբ:

9) Կրծքի հեղձուկ (գրудայ ժաբա), անեփրիզմ:

10) Սուր արտահայտված արտերիոսկլերոզ (նաև պսակաձև և ուղեղային արտերիաների):

11) Ամեն ձևով արտահայտված տուբերկուլյոզ:

12) Ծանր տեսակի նեվրոզ, եպիլեպսիա, հոգեկան հիվանդություններ:

13) Կենտրոնական ներվային համակարգության որդանական հիվանդություններ. եպիլեպսիա, պսիխոստենիա, հիստերիա, նեվրաստենիայի ծանր դեպքեր:

2. ԱԲԱՍԹՈՒՄԱՆ

Ցուցմունքներ սահմանորիաների համար

1) Թողերի տուբերկուլյոզ A₁, A₂, B₁, B₂, B₃,

2) Յենթանըակային (օճախութիւն) կամ այլ տեղում առաջացած ինֆիլտրատիվ ձևեր:

3) Մեկ կամ յերկողմանի պնեյմոտորաքսունեցող հիվանդներ՝ սրտի կանոնավոր գործունեության պայմաններում:

4) Տուբերկուլյոզային շաներդային (օրօֆիբրոզնի) պլեվրիտ (տաք շրջան):

5) Կոկորդի տուբերկուլյոզ՝ ինֆիլտրա-

տիվ ձեւի կամ աննշան խոցոտումներով (տաք շրջան) :

6) Ծուբերկուլյոզային պերիտոնիա և միջընդերային (մեզентերիալնի) գեղձերի տուբերկուլյոզ:

Յուցմունֆներ պահսինատի համար

1) Լիմֆադենիտ առանց խլվակների (СВИЩ) ու թարախահոսության, առանց արտահայտված ընդհանուր թունավորման (ինտակսիկացիա) :

2) Բրոնխոադենիտ.

3) Չոր պլեվրիտ կամ residua շվարտի ձեռով՝ եքսուղատիվ պլեվրիտից հետո:

4) Թոքերի տուբերկուլյոզ $R_1 R_2$ յեթե խորխի մեջ ՅԿ միանդամայն բացակայում են:

5) Վոչ տուբերկուլյոզային բնույթի խորնիկ բրոնխիտ.

6) Պնեյմոկոնիոզ:

7. Վոչ սուր կերպով արտահայտված իմֆիզեմա:

8. Բրոնխիալ աստմա՝ առանց խանդարումների սրտա-անոթային համակարգության կողմից:

9) Ցերկորդային սակալարյունություն:

10) Քլորոզ:

11) Ալաքնում դանաղան հիվանդու-

թյուններից հետո, առանց սրտի դորձունեցության խանդարման:

12) Խրոնիկ մալարիա:

Յուցմունֆներ

1) Կախեկսիա:

2) Չարորակ նորագոյացություններ:

3) Սրտա-անոթային սիստեմի որդանական հիվանդություններ յենթա և դեկոմպենսացիայի շրջանում:

4) Արտահայտված եմֆիզեմա կանդային (застойնի) յերեսութներով:

5) Թոքերի տուբերկուլյոզ արտահայտված դեկոմպենսացիայով (C):

6) Աղիքների տուբերկուլյոզ:

7) Վոսկորների և հողերի տուբերկուլյոզ բարձր ջերմաստիճանով, առատ թարախա-Հոսությամբ ու կախեկսիայով:

8) Սուր միլիար տուբերկուլյոզ:

9) Սուր կադեոզ պնեյմոնիա:

10) Հաճախակի և առատ թոքային արյունաթքումներ:

11) Կենտրոնական ներվային համակարգության որդանական հիվանդություններ. եպիլեպսիա, պսիխոզ, պսիխոստենիա, հիստերիա, ծանր տեսակի նեվրաստենիա:

3. ՑԽԱԼՏՈՒԲՈՒ

1. ՇԱՐԺՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՀԻՎԱՆ- ԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1) Խրոնիկ արտրիտ (*հողաբորբ*)՝ ինֆեկ-
ցիոն բնույթի, յերբ պատճառները պարզ-
ված չեն:

2) Արտրալգիտ՝ առանց որյեկտիվ փոփո-
խությունների *հողելում*, տարրեր ծագումով:

3) Թեղիդուալ յերևույթներ սուր ըևմա-
տիկ պոլիարտրիտից հետո (*ցավեր հողե-
լում*):

4. Մկանային «ըեվմատիզմ», միալգիտ,
նեյրոմիոզիտ, լյումբագո (*գոտկացավ*), տոր-
տիկոլիտ, իշխալգիտ:

5) Տրամբմատիկ արտրիտ յենքասուր և
խրոնիկ շրջանում:

6) Սպոնդիլոպարտրիտ և սպոնդիլեզ—թե-
թև և միջին ձևի, առանց կախեկոլիայի և
սննդառության անկման յերևույթների:

7) Պողագրիկ արտրիտ:

8) Կլիմակտերիկ արտրիտ:

9) Զեատող (деформирующий) պորիարտ-
րիտները ցույց են տրված պայմանակա-
նորեն:

2. ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՎԱՆ- ԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1) Պողագրա՝ վիսցերալ (*ընդերտյին*) յե-
րևույթներով:

2) Դիաբետի և ճարպակալման թեթև տե-
սակներ:

3. ՍՐՏԻ ՅԵՎ ԱՆՈԹՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ

1) Սրտա-անոթային համակարգության
բևմատիկ ախտահարում:

2) Միոլարդիոպատիտ:

3) Սրտերիո—կարդիոսկլերոզ՝ միջին և
թեթև տեսակի:

4) Անդիոնելիորող:

5) Հիպերտոնիա՝ թրոյլ և միջին աստի-
ճանի:

6) Տրամբոֆլեբիտ:

4. ՆԵՖՐՈՊԱՏԻԱ. ԹԵԹԵՎ ՅԵՎ ՄԻՋԻՆ ՏԵՍԱԿԻ

5. ՆԵՐՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՅԱՆ ՀԻ- ՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1) Պերիֆերիկ ներվային համակարգու-
թյան հիմնադրություններ, գլխավորապես
նեվրիտ և նորմալըլիտ:

2) Ներվային համակարգության ֆունկ-
ցիոնալ հիվանդություններ՝ գլխավորապես
նեվրաստենիկ ու ականցիաները, ի բացառյալ
հունիս ամիսը:

6. ՄԱՇԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1) Քոր առաջացնող դերմատոզ. լոկալ
ալբուրիտուս և ունիվերսալ նեվրոդեմիտ:

- 2) Արոնիկ Էկզեմա:
- 3) Պսորիազիս.
- 4) Պիուկերմիտ, Furunculosis, impetigoes.
- 5) Nerves zoster.

7. ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Արգանդի, նրա հավելվածների, շուրջարգանդային ինորչաթաղանթի և կոնքային վորովայնամիզի խրոնիկ բորբոքային սլբոցեսսներ:

2) Դաշտանի անոռմալիաներ (ամենորրեյա, ռլիքոմենորրեյա, դիոմենորրեյա և այլն) ձվարանների ինչպես նաև մյուս ենդոկրին դեղձերի ֆունկցիայի խանդարման հետևանքով (պոլիքորմոնալ խանդարում):

Հակացուցմունիքներ

- 1) Ամեն հիվանդության սուր շրջանում:
- 2) Սրտի հիվանդություններ՝ լիակատար գեկոմպենսացիայի շրջանում:
- 3) Ամեն ձևի տուբերուլյոզ:
- 4) Կենտրոնական ներվային համակարգության որգանական հիվանդություններ. եպիլեպսիա, պսիխոզ, պսիխոստենիա, հիստերիա, նեվրաստենիայի ծանր տեսակներ:

5) Կանանց սեռական գործարանների սուր և յենթասուր հիվանդություններ:

6) Կանանց սեռական գործարանների չարորակ ուռուցքներ:

4. ՍՈՒԽՈՒՄԸ

Սեզոնը. կլիմայական բուժման համար Սուխումը բաց է հոկտեմբերի 1-ից մինչև հունիսի 1-ը: Ամառվա ամիսներին այստեղ ծովային լողացում և արևաբուժում ե կիրառվում

Գ Ո Ւ Լ Ր Ի Պ Շ

ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ՍԱՆՍՈՐԻԱ

Ցուցմունիքներ

1) Վաղաժամ ինֆիլտրատներ:

2) Արհեստական պնեվմոտորաքսի բոլոր դեպքերը և թարմ հիվանդությամբ առաջացած բարդությունների դեպքեր:

3) Այն բոլոր ձևերը, վորոնք կարող են բարելավում առաջացնել յերկու ամիս ըժշկվելու միջոցով:

4) Գագաթնային պրոցես, յեթե հիվանդի սանատորիա ընդունվելու ժամանակ կամ մատիկ անցյալում խորխի մեջ կոխի մանրեներ են գտնվել:

5) Լորար և լուրուլյար պնեվմոնիաների ձևեր, բայց արդեն վորոշված ապիրեկսիայի շրջանում:

6) Եքսուդուտիվ պլեվրիտից հետո առողջացող անձինք:

Հակացուցմունիքներ քայլախտավորների համար

ա) Յերկարատև տենդային (լիխօրածոնայի) ջերմաստիճան, վրը վկայում ե պրոցեսսի կայուն գեկոմպենսացիայի մասին.

բ) մինչև չորս թոքային դաշտեր (լեցունօթ ու լուսական պահաժաման) ընդունելու համար կամ վարչական գուղքական պահաժաման:

գ) հիվանդի խիստ հյուծվածություն.

դ) կայուն խանգարումներ աղիքներում.

ե) Յերիկամային պարենիսիմայի (նեփը ու նեֆրիտ) զանազան ախտահարություններ, ինչպես նաև ակութային յերիկամային հիվանդություններ, վորոնց ընթացակցում եմ իդատար ուղիների ախտահարություն:

դ) Թոքախտի ձևեր, վորոնք բարդացած են դիաբետով և խիստ գիրությամբ:

5. ԿՈԲՈՒԼԵՏԻ

Ցուցմունքներ

1. Ցուքերկուլյող

Գարնանային և ամառային սեզոնների համար (ապրիլի մեկից մինչև նոյեմբերի 1-ը):

1) Թոքերի տուքերկուլյողի կոմպենսացիայի յենթարկված ձևեր, այսպես կոչված 1-ի և 2-րդ փուլերի ֆիբրոզ դեպքեր ըստ Տուրբանի, յերբ կարիք է զգացվում կուրորտային բուժման կազմութիւն մեթոդներով ամրապնդել կոմպենսացիայի կայունությունը:

2) Զոր պլեվրիտ, յենթասուր ու խրոնիկ քիրառային (վայունային) պլեվրիտ ու տուքերկուլյողային բնութիւն պերիտոնիտ առանց

խիստ հյուծման, առանց թոքերում կլինիկուրեն արտահայտված ընդարձակ ախտահարության:

3) Բրոնխոպաղենիտ, պլեվրոպաղենիտ, ավշային պերիֆերիկ ու ներքին գեղձերի (բրոնխիալ ու մեղքենտերիալ (տուքերկուլյող առանց ընդարձակ թարախոտումների, առանց բարձր տենդի, առանց հյուծման յերկուլյութների (դեպքեր, վորոնք խիրուրգիական միջամտություն չեն պահանջում):

4) Հոդերի, վոսկորների տուքերկուլյող առանց տենդի, առանց ընդարձակ թարախոտումների և առանց հյուծման:

5) Միզա-սեռական համակարգության տուքերկուլյող՝ յերիկամների, միզափամփուշտի, ձվերի, արգանդի և նրա հավելվածների տուքերկուլյող, առանց բարձր տենդի և առանց հյուծման:

6) Մաշկի տուքերկուլյող:

7) Թոքերի տուքերկուլյող՝ չափավոր կերպով արտահայտված յերկուլյութներով, յենթակոմպենսացիա տաքության հետ միասին, թակոմպենսացիա տաքության հետ միասին, բայց վոչ բարձր յենթաֆերբիլ տաքությունից, առանց հակումի դեպի հաճախակի արյունահոսությունները և առանց ներվապահիսիկ դրզուականության սուր յերկուլյութների, առանց բարդությունների աղիքների կողմից (լուծի հակում չափահայտելը):

8) Տուքերկուլյուղային պլոցեսսի սկզբնա-

կան ձևերը, բայց առանց արագ զարդանալու հակումի:

9). Կոկորդի տուբերկուլյոզային ախտա-չարություն միայն սկզբնական փուլում (ին-Փիլտրատ և փոքր խոցոտումներ առանց կուլտալու դժվարությունների):

2-րդ. այլ հիվանդություններ

Ամբողջ տարվա ընթացքում:

1) Վերին շնչառական ուղիների խրոնիկատառ, վոչ տուբերկուլյոզային բրոնխիտ, մանավանդ յեթե փոքր քանակությամբ, բայց դժվարությամբ խորիս և արտազատվում:

2) Սակավարյունություն՝ ինֆեկցիոն ու ծանր հիվանդություններից հետո:

3) Նեվրաստենիա և աստենիա՝ գերհոգ-նածության հետևանքով, բայց առանց խիստարտահած ներլային գրգռականության:

4) Թոքերի և միջիզգի:

5) Բրոնխիալ աստմա, վորը կապ ունի վերին շնչառական ուղիների հիվանդությունների կամ բրոնխիալ գեղձերի մեծանալու հետ, բրոնխիալ աստմա:

6) Արտերիոսկլերոզ (վոչ զարդացած), միաստենիա և միոկարդիտ առանց կոմպենսացիայի խանգարման:

7) Ռախիտ:

Հակացուցմունիքներ

1) Թոքերի տուբերկուլյոզի դեկոմպեն-սացիայի յենթարկված բոլոր ձևերը:

2) Կոկորդի տուբերկուլյոզային ախտա-չարություն՝ ընդարձակ խոցոտումներով և դիսֆագիայի ու ստենոզի յերեսույթներով:

3) Ավայային գեղձերի, վոսկորների, հո-դերի, շճային խսուռների խիբուրգիական տու-բերկուլյոզի ծանր տեսակները՝ առատ թարա-խոտման և հեկտիկ տենդի յերեսույթներով:

4) Կենտրոնական ներլային համակար-դության հիվանդություններ:

5) Ներլային համակարգության ֆունկ-ցիոնալ հիվանդությունների խրոնիկ ձևեր:

6) Թոքերի տուբերկուլյոզ՝ աղիքների կողմից առաջացած բարդությունների հետ միասին:

7) Թոքերի տուբերկուլյոզ՝ սրտա-անո-թային համակարգության արտահայտված խանգարումներով (ամառային ամիսներ՝ հունիս-օգոստոս):

6. Գ Ա Գ Ր Ի

Յուցմունիքներ

1) Սակավարյունություն, սննդառության անկում, մանավանդ ինֆեկցիոն ու ծանր հի-վանդություններից հետո:

2) Գերհոգնածություն՝ մտավոր կամ ֆիզիկական աշխատանքից:

ԽՈՐԴՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵԶԱՆԻ ԿՈՒՐՐՈՏՆԵՐԸ

1. ԲՈՒՀՈՎՆԻ

Մանկական սանատորիաներ.

Ցուցմունիքներ

1) Սակավարյունություն, սննդառության անկում, ծանր հիվանդություններից հետո առողջացողները:

2) Վուկորների, հողերի, և գեղձերի տուբերկուլյոզ առանց խրվակների, վորն անկողնային խնամք չի պահանջում:

3) Պերիտոնիտ, վորն անկողնային խնամք չի պահանջում:

4) Աղդեղիվ պլեվրիտի մնացորդներ ունեցող հիվանդներ:

Հակացուցմունիքներ

1) Թոքերի սուր արտահայտված տbc.

2) Կոկորդի տbc.

3) Բեզմատիզմ, պողագրա:

4) Ներվային համակարգության որդանական հիվանդություններ:

5) Հիստերիա, եպիլեպսիա:

6) Զարորակ նորագոյացություններ:

7. ՆՈՐ ԱՖՈՆ

Կուրորտային հիմնարկներից այդտեղ կահանգատային տուն, ուր ընդունվում են հանգստացողները, վորոնք բժիշկների մշտական հակողության կարիք չունեն:

2. ՍՈՒԲԱԽԱՆԻ

Ծծմբային վաննաներ

Ցուցմունիքներ

1) Շարժման գործարանների և պերիֆերիկ ներվերի հիվանդություններ, վորոնք

յերկարատև ու խրոնիկ բնույթի են կըսում և
ըկմատիկ, բեմատոյիդ, ինֆեկցիոն-տոկոսիկ և
տրավմատիկ ծագում ունեն:

2) Խրոնիկ թունավորումներ սնդիկով և
արձիճով:

3) Տրոֆիկ բնույթի մաշկի հիվանդու-
թյուններ, վորոնք յերկարատև ընթացք ու-
նեն:

4) Կանանց գործարանների հիվանդու-
թյուններ, վորոնք յերկարատև ու խրոնիկ
բնույթ ունեն. ինֆիլտրատ ու քիրտ (ՎԱՊՈՒ):

Հակացուցմունքներ

1) Սուր տենդային հիվանդություններ.

2) Հղիություն:

3) Շնչառության գործարանների խան-
դարումներ:

4) Զարորակ ուռուցքներ:

5) Հակում դեպի կարմիր քամի (քօյա)
հիվանդությունը:

6) Արտի որդանական արատներ, աներիզմ,
աթերոմաթոզ:

ԿՈՎԿԱՍԱՆ ՀԱՆԳԱՅԻՆ ԶՐԵԲԻ ՅԵՎ ՀՅՈՒՄԻ- ՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՍԵՎ-ԾՈՎՅԱՆ ԱՌԱՓՆՅԱ ԿՈՒՐՈՐՏՆԵՐ

1. ՊԵԱՏԻԳՈՐՈՒԿ

Ցուցմունքներ

1) Վոսկորների, հողերի և մկանների
տարրեր ծագում ունեցող հիվանդություններ.
Խրոնիկ պերիստիտ, ոստիտ, բուրեյիտ, ար-
տրիտ, պերիարտրիտ և ֆիբրոմիոզիտ. Վոս-
կային կոշտուկի աննորմալ զարդացում,
տարրեր ծագում ունեցող անկայուն կծկանք
(կոնտրակտուրա) և նյարդային անկիտող
(բացի կենտրոնականից). Խրոնիկ ոստեոմիե-
լիտ կրկնվող խրվակներ. վ (յեթե խիրուրգիա-
կան միջամտության համար ցուցանիշներ
չկան). սպոնդիլոզ, սպոնդիլատրիտ և սպոն-
դիլիտ՝ տոկսիկ և ինֆեկցիոն ծագումով (բա-
ցի տուբերկուլյոզային):

2. Վորովայնային խոռոչում տեղի տևնե-
ցած բորբոքային պլրոցեսների մնացորդներ,
վորպես վարակման և արավմի (բացի տւբեր-
կուլյոզից) հետեւանքներ, ինչպես նաև հետո-
պերացիոն զողվածքներ:

3. Խրոնիկ ֆլեբիտ, պերիֆլեբիտ և տրամ
բոֆլեբիտ.

4. Խրոնիկ թունավորում ծանր մետաղնե-
րով (սնդիկ, վիսմուտ, մկընդեղ, արձիճ և
այլն):

5. Կանանց հիվանդություններ. կանանց սեռական գործարանների խրոնիկ բորբոքային հիվանդություններ, մանավանդ վորոնց ընթացակցում և սեկրեցիայի բարձրացում: Վորովայնամիզի և խորշաթաղանթի ներքին սեռական գործարանների բորբոքման մնացորդներ (նաև սպիական ձևերը), դաշտանային ֆունկցիայի թուլացում՝ ներքին սեկրեցիայի խանդարման հետեւվանքով, ինչպես նաև արդանդի թերզարգացման հողի վրա առաջացած ֆունկցիոնալ խանդարումներ:

6. Միզա-սեռական համակարգության հիվանդություններ. խրոնիկ ցիստիտ, պրոստիտ, ֆունիկուլիտ և եպիդիումիտ՝ գոնոռընթացյի և այլ ինֆեկցիաների հետեւվանքով (բացի տուբերկուլյոզից), խրոնիկ պիյելիտ, այդ թվում և կարիքության հետիւնքիտ:

7. Ներվային համակարգության հիվանդություններ՝ պերիֆերիկ ներվային սիստեմի հիվանդություններ՝ ռադիկուլիտ, պլեկտոսիտ, նեվրալգիա, նեվրիտ, նեվրոմիոզիտ և տարբեր ծագում ունեցող պոլինեվրիտ: Պերիֆերիկ ներվային համակարգության վիրավորման և այլ տրավմատիկ վնասվածքների հետեւվանքներ, վորոնք խիբուրդիական բուժում չեն պահանջում: Կենտրոնական ներվային համակարգության հիվանդություններ. ներվային համակարգով թյան լուես, մենինդիտ, ենցեֆալիտ, միյելիտ, տարես՝ առանց սուր առտաքսիայի ու կախեկոսիայի: Այսպես կոչված

անախտանիշ նեվրոլուես՝ սպեցիֆիկ դրական ռեակցիաներով վողնուղեղային հեղուկ և, վոչ լուետիկ ծագում ունեցող ենցեֆալիտ (բացառությամբ համաճարակայինի), մենինդումիյելիտ (վոչ լովետիկ) և տրավմատիկ հեմատոմիյելիտ:

8. Սիֆիլիտիկ հիվանդություններ. գումային լուես, մանավանդ վոսկորների, հոդերի, մկանների և պարենիմատող գործարանների լուետիկ հիվանդություններ: Լուես՝ լատենտ շրջանում: Մերկուրիալիզմ և հարակից յերեվույթներ սալվարսանային և վիսմուտային տերապիայից հետո:

9. Մաշկի հիվանդություններ. խրոնիկ դերմատոզ, վորը կապ ունի նյութերի փոխանակության խանդարման և վեգետատիվ ներվային համակարգության խանդարման հետ (եկղեմա, պսորիազիս, յեռքոր, իխտիոզ), խրոնիկ նեվրոդերմիտ, խրոնիկ պիոդերմիտ:

10. Ստամոքսի և աղիքների հիվանդություններ. գաստրիտ (ստամոքսարորը)՝ նորմալ նվազած կամ ուժեղացած թթվությամբ, բայց առանց ստամոքսի պարզման (եվակուտորը) ընդունակությունն եյափես խախտվելու: Ստամոքսի 12-մատնյա աղիքի խոցեր, վորոնք խրոնիկ ընթացք ունեն և վորոնք խորհանդարտման (զատիպը) շրջանում սուր բընությ ընդունելու և արյունահոսության հակում ունեն, ինչպես նաև սուր ձևով արտահայտված յերեվույթներ չեն հայտնաբերում

վորովայնամիզի կողմից։ Բարակ և հաստ աղիքների խրոնիկ բորբոքային հիվանդություններ՝ տարածված կամ հատվածավոր (տիֆլիտ, սիգմոիդիտ, պրոկտիտ և այլն), ինչպես նաև ակերիվիսցերիտ։ Աղիքների շարժողական ֆունկցիայի խանդարում (սանդանքային և մի ոտոնիկ բնույթի)։

Ծանրթութ։ Խոցային հիվանդները յենթակա յեն բուժման առավելապես սանատորիա կան պայմաններում։

11. Լյարդի և լեղուղու հիվանդություններ։ Լյարդի ֆունկցիոնալ անբավարարություն առաջնային և յերկրորդային բնույթի, վորպես աղեստամոքսային թունավորումների հետեւանք (սննդային, ալկոհոլային, արձիճային)։ Ինֆլեկցիոն և տոկսիկ ծագում ունեցող հեղատիտ, առանց սուր յերեվույթների, առանց արյան շրջանառության, և ընդհանուր վիճակի զգալի խանդարումների։ Լեղատար տւղիների հիվանդություններ։ Խոլեցիոտիտ, խոլեանիրիտ՝ լիակատար հանդարտման շրջանում, առանց ընդհանուր թունավորման յերեվույթների։ Լեղաքարային հիվանդություն, առանց լեղածորանների կայուն խօցման։ Լեղուղու վորորում (ռԱ. ՇՏ) կատար ված ոպերատիվ միջամտութայն հետեւանքներ։

12. Նյութերի փոխանակության հիվանդություններ։ պողագրա՝ հոգերում սուր արտահայտված յերեվույթներով, դիատեղ՝ մի-

ղաթթվային, թրթնջկաթթվային և ֆուֆորաթթվային։

13. Շնչառության գործարանների հիվանդություններ։ Վերին շնչական ուղիների խրոնիկ կատառ՝ տորպիդ բնույթի։ Քթի թարախային ատրոֆիկ կատառ։ Կոկորդի խրոնիկ կատառ և միջին ականջի կատառ (վոչ թարախային)։ Քթի ու կոկորդի կատառի հետեւանքով, յեթե կան այլ ցուցմունքներ Պյատիգորսկում բուժվելու համար)։

Ծանրթ։ Ճմեռված համար նույն ցուցմունքներն են, ինչ և ամառված համար, յեթե ցուրտ յեղանակի առնչությամբ սուր բնույթ ընդունելու հակում չի հայտնաբերվում։

Հակացուցմունքներ

1. Կուեսի թարմ դեպքեր, ինչպես նաև արտաքին վարակիչ արտահայտումներով նըկատվող դեպքեր։

2. Կոմպլեսիոն միյելիտ՝ տուբերկուլյուզային սպոնդիլիտի հողի վրա։

3. Շարժման գործարանների տառապումներ, վորոնք իրենցից ներկայացնում են վերջնական ձև ընդունած վոսկրային անկիլոզ, մըկանային ատրոֆիա և այլն։

4. Ստամոքսի և աղիքների որդանական հիվանդություններ, վորոնք եյապես խախտորմ են ստամոքսի պարագման (եվլակուատուր) ընդունակությունը և ստամոքսի պարունակության կանգ են առաջացնում։ Խոցային ենտե-

բոկոլիտ և խրոնիկ դիզենտերիա (ամյոքային և բացիլյար), աղիքների տուբերկուլյոզ:

5. Մաշկի տուբերկուլյոզի ընդարձակ խռցային ձևեր:

6. Կանանց սեռական գործարանների բոլոր նորագոյացությունները, ֆալոպյան փողերի պարկավոր ուսուցքներ: Փոքր կոնքի խռովչում առաջացած յենթասուր պլրոցեսներ և խրոնիկ թարախակալումներ:

2. ԵՍՍԵՆՏՈՒԿԻ ՑՈՂՄՈՒՆԻԲՆԵՐ

1. Ստամոքսի և աղիքների հիվանդություններ. ստամոքսի կատառ՝ նորմալ և նըսվազ թթվությամբ, ստամոքսի սեկրեցիայի ֆունկցիոնալ խանգարում՝ այդ սեկրեցիայի նվազման իմաստով: Աղիքների խրոնիկ կատառ, (տիֆլիտ, սիզմոիդիտ և այլն), ինչպես նաև շարժողական խանգարումներ (փորկապություն, լուծ):

2. Լյարդի և լեղուղու հիվանդություններ. ա) լեղաքարային հիվանդություն, լեղապարկի և լեղուղու բորբոքում (հասարակ և կալկուլյոզ): բ) Հեպատիտ, պերիհեպատիտ, պերիխոռեցիստիտ:

3. Նյութերի փոխանակության հիվանդություններ. ա) ճարպակալում, բ) պողագրիկ արտրիտ և ներվամկանային ապարատի հիվանդություններ առանց խիստ ձևատումնե-

բի, գ) պողագրայի զուգակցված ձևեր՝ ճարպակալման, դիարետի, լյարդի և լեղատարուղիների հիվանդության միզաթթվային, և թրթնջուկաթթվային դիատեզի հետ միասին, դ) դիարետ առանց նվազած սննդառության և սուր բարդությունների, ե) դիարետի զուգակրցված ձևեր՝ պողագրայի, միզաթթվային դիատեզի, լյարդի ու լեղատարուղիների հիվանդությունների հետ միասին:

4. Կանանց հիվանդություններ՝ զուգակրցված ստամոքսի, աղիքների, լյարդի, լեղուղու և նյութերի փոխանակության հիվանդությունների հետ, վորոնք հիմք են ծառայում եսսենտուկիում բուժվելու համար (§§ 1, 2 և 3):

ա) Ներքին սեռական գործարանների, վորովայնամիզի և խորշաթաղանթի խրոնիկ բորբոքման մընացորդներ.

բ) դաշտանային ֆունկցիայի թուլացում՝ ներքին սեկրեցիայի խանգարման հողի վրա, գ) արդանդի թերապարզացում, վորը ֆունկցիոնալ խանգարումներ ե առաջացնում.

5. Միզասեռական համակարգության հիվանդություններ. խրոնիկ ցիստիտ և պիյելիտ, վոր կապված են միզաթթվային դիատեզի ու պաղպղայի հետ (բայց կապ չունեն վարակի հետ):

Հակացուցմունքներ

1. Ստամոքսի և աղիքների հիվանդություններ. որդանական հիվանդություններ, վորոնք եյալես խախտում են ստամոքսի պարպման (եվակուատոր) ընդունակությունը և ստամոքսի պարունակության կանդեր են առաջացնում.

Ստամոքսի և 12-մատնյա աղիքի խոցեր. ստամոքսի հիվանդություններ՝ բարձր թթվությամբ. խոցային ենտերոլիլիտ, խրոնիկ դեղնտերիա (ամյորբային ու բացիլյար) :

2. Թոսֆորա-թթվային դիատեզ.

3. Սրտա-անոթային համակարգության խանգարում.

4. Նեվրոզ և նեվրիտ.

5. Կանանց հիվանդություններ. կանանց սեռական գործարանների նորագոյացություններ. Փալոպյան վողերի պարկավոր ուռուցքներ, փոքր կոնքի խոռոչում առաջացած յենթասուր պլրոցեսներ և խրոնիկ թարախոտումներ:

3. ԺԵԼԵԶՆՈՎՈԴՍԿ

Ցուցմունքներ

1. Ստամոքսի և աղիքների հիվանդություններ. ստամոքսի կատառ՝ բարձր թթվությամբ և ստամոքսի սեկրեցիայի ֆունկցիոնալ խանգարում՝ սեկրեցիայի ուժեղացման հետևանքով: Ստամոքսի և 12-մատնյա աղիք-

քի խոցեր՝ հանդարտման ըլջանում, առանց արյունահոսությունների և առանց սուր արտահայտված յերեվույթների վորովայնամիզի կողմից: Ոպերացիայի յենթարկված խոցեր առանց թարմ ու կրկնվող խոցային պրոցեսսի խիստ ախտանիշների: Աղիքների խրոնիկ կատառ (տիֆլիտ, սիգմ իդիտ), ինչպես նաև աղիքների շարժողական խանդարումներ (փոր կապություն, լուծ):

2. Լյարդի և լեզուղու հիվանդություններ. ա) խորանդիտի, անգիրխոլիտի և հեպատիտի խրոնիկ ձևեր՝ անկախ նրանց ծագումից (ենտերոգեն, հեմոտոգեն, ինֆեկտիոն, տոկսիկ, թե գեղնախտի դեպքերում և թե առանց նրա). բ) խորեցիստիտի խրոնիկ ձևեր՝ լարդություններով, պերիթոլեզիստիտ, պերիդուղենիտ, գ) լեղա-քարային հիվանդություն առանց հաճախակի ծակոցների:

3. Միզասեռական համակարգության հիվանդություններ. նեֆրոզ առանց այտուցի կամ աննշան այտուցներով, մեզի բավարար քանակությամբ և չափավոր ալբումինուրիայով ու ցիլինդրիայով (առավելապես սանտորինական պայմաններում): Խրոնիկ նեֆրիտ՝ աննշան պոլիխուրիայով, առանց զգալի փոփոխությունների սրտի կողմից ու միաժամանակ արյան բարձր ճնշումով (առավելապես սանտորինական պայմաններում): Խրոնիկական պիելիտ, ցիստիտ, յերիկամա-քարային հիվանդություն:

4. Նյութերի փոխանակության հիվանդություններ. պողագրա, դիարետ՝ (վոչ ծանր տեսակը) ներվա-մկանային թուլությամբ և նվազած սննդառությամբ: Դիարետի յերիկամային (ունալ) ձևեր, ինչպես նաև միզաթթվային, թրթնջուկաթթվային ու ֆուֆորաթթվային դիատեզ:

Հակացուցմունքներ

1. Ստամոքսի և աղիքների հիվանդություններ. ստամոքսի և 12-մատնյա աղիքի խոցեր սուր շրջանում, հաճախակի կրկնվող արյունահոսություններով, յերբ հիվանդությունը հաճախ սուր բնույթ ե ընդունում, խոցեր, վորոնք ծածկվելու հակում ունեն. որդանական ստենոզ, դաստրոպտոզ և այլ հիվանդություններ (ստամոքսի ատոնիա), վորոնք եյապես խախտում են ստամոքսի պարպման (եվակուատոր) ընդունակությունը և ըստմոքսի պարունակության կանգ են առաջացնում. լեղապարի եմպիյեմ, լեղածորենների խցանում, խոցային կոլիտ, աղիքների նեղացում կամ ընդարձակ աջակցումներ (ըրափենիա).

2. Յերիկամների և միզատար ուղիների հիվանդություններ. ծանր նեֆրոզ, նեֆրիտ, պիյելոննեֆրիտ, հիդրո և դիսնեֆրոզ, յերիկամների առաջնային սկլերոզ: Հիվանդություններ, վորոնք դժվարեցնում են մեզի արտադրումը (շաղանակագեղձի դերաձում), միզանցքի նեղացում:

3. Սրտա-անոթային համակարգության կոմպենսացիայի խանգարումներ: Ցուցմունքներ յերեխաներին ժեղեղնակողակում բուժելու համար (սանատորիաներում)

1. Ստամոքսի և աղիքների հիվանդություններ. ստամոքսի կատառ բարձր թթվությամբ, աղիքների խրոնիկական կատառ:

2. Լյարդի և լեղուղու հիվանդություններ. հեպատիտ, խոլեցիխոտիտ և ինֆեկցիոն դեղնախտի յերկարատև ձևեր:

3. Նեֆրոզ-նեֆրիտ: խրոնիկական ձևեր (առանց խիստ արտահայտված հիպերտոնիայի), պիյելոնցիստիտ, պիյելոննեֆրիտ:

4. Դիարետի վոչ ծանր տեսակը (դիատեզ)՝ միզաթթվային, թրթնջուկաթթվային ու ֆուֆորաթթվային:

5. Եկսուգատիվ դիատեզ:

4. ԿԻՍԼԱՎՈՒՄԿ

Ցուցմունքներ

1-ի. Սրտա-անոթային համակարգության հիվանդություններ.

1. Սրտային մկանի, հաղորդիչ ներվա-մկանային ու կափույրային (քլանինի) ապարատների ախտահարություն, վար կարող է տարրեր ծագում ունենալ, յերբ խախտված է ութմը կամ չի խախտված, յերբ կամպենսացիայի խանդարման յերեփույթներ են նկատվում, բայց միջին աստիճանից վոչ ավելի,

այսինքն առանց կայուն, տարածված այտուցների, առանց կանգային յերեվույթների լյարդում, յերիկամներում և այլն:

2. Ընդհանուր և տեղափակված սկլերոզի սկզբնական ձևեր, որինակ՝ ուղեղային անոթների, առրաջայի, սկլերոզի, նեֆրոսկլերոզի:

3. Աղցինա pectoris-ի թեթեվ տեսակը, վորին չեն ընթացակցում հաճախակի, յերկարատև կամ անցրած ստենոկարդիայի նոողաներ:

4. Հիպերտոնիա, յեթե սրտի մկանի ըգգալի թուլացում չի նկատվում. ուղեղի արյան շրջանառության խանգարում՝ նեֆրոզի հետեւանքով:

2. Ներվային համակարգության հիվանդություններ. ա) անդիոնեֆրոզ և նեփրոզ, վորոնք կապված են ներքին սեկրեցիայի գեղձերի նվազած գործունեյութայն հետ և վորոնց չեն ուղեկցում ջղաճդական նոողաներ (ուստու) խմառուսիվ և խիստ ուժեղացած աֆֆեկտիվ յերեւույթներ և վորոնց համակցված են այլ հիվանդություններ, վորոնք ցուցանիշ են ծառայում կիսլավոդսկում բուժվելու համար:

3. Նյութերի փոխանակության հիվանդություններ. ճարպակայում, պողագրա, միջաթթվային դիատեզ, վորպիսի հիվանդությունների առկայության դեպքում առաջին հերթին աչքի յեն ընկնում սրտա-անոթային խանգարման ախտանիշները, Ֆոսֆորաթթվային դիատեզ:

4. Ծնչառության գործարանների հիվանդություններ.

1) Վերին շնչական ուղիների խրոնիկ հիվանդություններ վոչ տուբերկ և լյոզային բընութիւն:

2) Թոքերի եմֆիզեմա, առանց դեկոմպենսացիայի յերեվույթների՝ սրտա-անոթային սիստեմի կողմից.

3) Բրոնխիալ աստմա, առանց ներվային համակարգության ուժեղացած գրգռականության սուր յերեվույթների:

4. Սրտա-ան, թային հիվանդների պիյելիտ:

Հակացուցմունիքներ

1. Սրտա-անոթային համակարգության հիվանդություններ. ա) սրտի և անոթների չվերջացած սուր բորբոքային պլրոցեսներ, չվերջացած սուր բորբոքային պլրոցեսներ, բ) դեկոմպենսացիայի խիստ արտահայտված յերեվույթներ, գ) անեվրիզմ, դ) կրծքի հեղձուկ (ըրծանայ յաճա), յեթե առկա յեն դեկոմպենսացիայի արտահայտված յերեւույթներ, է) հիպերտոնիա, վրաը զուգակցված նեֆրոզի, սրտի արտահայտված թուլության հիվանդի, սրտի արտահայտված յերեւույթների կամ անոթների ընդհանուր խիստ սկլերոզի (յերեւույթների) հետ, զ) սրտի և անոթների հիվանդություններ, վորոնց ընթացակցում հիվանդություններ, վորոնց ընթացակցում հիվանդային խիստ գրգռականության հետ կապված յերեւույթներ:

2. Ներվային համակարգության հիվան-

դություններ. ա) որդանական ներվային հիվանդություններ հիպերկինետիկ և սպաստիկ (ստնդանքային) արտահայտումներով, բ) բուլոր նեվրոզներն ու պսիխոնեվրոզները՝ ենդոկրին գեղձերի գերգործառնության (հիպերֆունկցիայի) սուր արտահայտված յերեվույթներով, այդ թվում և տիրեռառկուիկ յերեվույթների առկայությամբ՝ սրտի կողմից:

5. ՄԱՑԵՍՈ

Ցուցմունքներ

